

# Հ Ա Ն Գ Ի Է Ս Ո Ւ Ս Ո Ւ Մ Ն Ա Կ Ա Ն

## Տ Ի Ե Ջ Ե Ր Ա Գ Ի Տ Ո Ւ Թ Ի Ի Ն

### Ն Ա Ւ Ա Գ Ի Տ Ե Լ Ի Բ

1. Ինչ է Տիեզերք և Տիեզերագիտություն.  
 — 2. Ինչ է աստղ. — 3. Այլըմ տեսնուած կապոյտ երկինքն ինչ բան է. — 4. Աստղերն ինչ օրեկերով տիեզերաց մէջ կը շարժին. — 5. Քանի տեսակ ձողորմիկն կայ. — 6. Տիեզերական ձողորմիկեր քանի օրեկք ունի. — 7. Ինչ է յոյսն. — 8. Աստղերէն ինչպէս կը նստնի մեզի. 9. — Ընտան արագորշիկն որչափ է. — 10. Ինչ ուղղորշիկներ կը տարածուի. — 11. Ինչ բան է բնական կոմետն յոյսոյ. — 12. Օդոյ մէջ ինչ ուղղորշիկն կ'առնու. — 13. Աստղաց ինչ երևոյթ կու տայ. — 14. Ինչ է յուսալատիկը. — Ինչ են գիծք յուսալատիկի. — 16. Ինչպէս կրնանք մարմնոյ մը յուսալատիկներն ստանալ. — 17. Ընտան պատիկի վերջուածորշիկն աստղաբախտորշիկն մէջ ինչ շարք ունի:

1. Թէ որ պայծառ գիշեր մը դիտենք մեր գիտոյն վրայ երկինքը՝ կը տեսնենք անբաւ լուսաւոր կէտեր, որոնք մեզմէ միջոնուոր մղոններով հեռու են և կը շարժին անհուն անաւան ման միջոցին մէջ. այս միջոցն ահա կը կոչի Տիեզերք: Որով Տիեզերագիտութիւնը կը խօսի այս անհուն միջոցին մէջ եղած մարմնոց բնութեան և շարժմանց վրայ, Թէպէտ և Աստղաբախտութիւն և Տիեզերագիտութիւն նոյն գիտութիւնն է, բայց Տիեզերագիտութիւնն աւելի սկզբնական ժամօթութեանց վրայ կը խօսի, որոնք աւմեն օր աչքով կը տեսնուի:

2. Տիեզերաց մէջ եղած այն լուսաւոր ու շարժուած մարմիններն առհասարակ աստղ կը կոչին. որոնք Թէպէտ մեզի երկնից ընդարձակութեան մէջ իրրեւ լուսաւոր կէտեր կ'երևան՝ սակայն շատ ման են. հեռաւորութիւնն է որ մեզի այնպէս անոն կը ցուցնէ: Երկիրս ալ անոնց նման աստղ մ'է և Տիեզերագիտութեան ուսման նիւթ է. բայց Տիեզերագիտութիւնն երկիրս այն բաներուն վրայ կը խօսի որ հեռուէն իր վրայ կրնան տեսնուիլ, ինչպէս է իր ձևը, շարժումը, մեծութիւնն, և այլն: Իսկ մեկուկ գիտողութիւններն որ իր միջի բնակիչները միայն կրնան ընել, ուրիշ ուսմանց կը վերաբերին:

3. Երկինք՝ մեր աչքին կապոյտ գունով գմբեթաձև մը կ'երևայ և աստղերն անոր վրայ կը պաճ. բայց այս բանն աչքի երևոյթ մ'է. երկիրս կրորութիւնն է որ մեզի գմբեթաձև կը ցուցնէ

երկինքը. և այն կապոյտ գոյնն առավ կու գայ արևուն հաւաքայթից մթնոլորտին մէջ բաձնուելէն: Որովհետև մթնոլորտին ամեն կարգն հաւասար խտութիւն ունի, այլ որչափ վեր ելլանք՝ այնչափ ալ մթնոլորտին կարգերը կ'անօրոշման. և յոյսն որչափ խիտ օդ գտնէ՝ այնչափ ալ կը պայծառանայ: Այնպէս որ եթէ կարենայինք մթնոլորտին մէջ այն աստիճան վեր ելլել որ հօն եղած օդոյ կարգը չկարենար մեր աչքին լուսոյ երևոյթը տալ, այն աստիճան չորս կողմի մութ խաւար պիտի տեսնէինք: Ուրեմն ըսել է, Թէ երկնքին գոյնն առավ կու գայ մթնոլորտին կարգերուն կարգաւ քիչ լուսաւորութիւն: Եւ աստեղաց երկնից գմբեթին վրայ կ'պաճ երևնայ ալ աչքի երևոյթ է. որովհետև մեր աչքը չունի այն զօրութիւնն որ կարենայ տեսնել աստեղաց իրարմէ ունեցած հեռաւորութիւնը, կը կարծենք որ բոլոր աստղերն իրարու քով և մեզմէ նոյն հեռաւորութեամբ կը կենան. այլ ընդհակառակն իրարմէ անհուն հեռաւորութիւն ունին և ազատ առկախեալ կը շրջին տիեզերաց մէջ:

2. Տիեզերաց մէջ անարժ քան չկայ, այլ ամենայն ինչ շարժման մէջ է, և այս շարժմունքն երկու հակառակ զօրութեանց արգաստիքն է, որոնցմէ մէկը կ'ըսուի ձողորմիկ և միւսը փանդորմիկ: Բայց տիեզերաց միջի մարմիններն երկու կերպով կը շարժին, մէյմ՝ իրենց առանցքին վրայ, և այս շարժումը կ'ըսուի քառաչափան շարժումն, և մէյմ՝ ալ ուրիշ մարմնոյ մը բոլորովոր, և այս շարժումը կ'ըսուի շրջաբերական շարժումն:

Արդ ենթադրենք Թէ մարմին մը Պ (Չկ. 1) կը դառնայ ուրիշ Բ մարմնոյ մը բոլորովոր, որ կը կոչուի կիցրուն դրոշման: Այս Բ կեդրոնը միայն դեպ իրեն կը քաշէ ուղիղ գծով կեդրոնաձիգ զօրութեամբ զՊ մարմինը. բայց այս զօրութեան հաւասար չափ կառակ զօրութիւն մ'ունի Պ մարմինն, որ կ'ըսուի կեդրոնախաչ զօրութիւն, որով միշտ կեդրոնէն կ'ուզէ հեռանալ: Եւ այս երկու զօրութիւններն իրարու հաւա-



(Չկ. 1)

ար և Հակառակ բլայով գիրար կեղծանեն, որով Ա մարմինն ոչ կը հեռանայ Բ կեղծանեն, և ոչ կը մտնուայ, այլ անոր չորս բոլորտիցը կը յրկարեի բոլորակաձև: Թէ որ այս երկու զօրութիւններն առաջին յարթէ՛ Ա մարմինը դէպ ՚ի կեղծոնը կ'իյնայ, իսկ թէ որ երկրորդը՝ Ա մարմինը ԱԳ յօշոտողին ուղղութեամբ կը հեռանայ կեղծոնէն:

Օրինակ մը ստու Համար, ենթադրենք որ Արևն այս յրևապատին կեղծոնը կեցած բլայ, որուն բոլորտիցը կը զատնայ Երկիրս Ա կէտին վրայ: Արևն իր կեղծոնածից զօրութեամբը զԵրկիրս իրեն կը քաշէ, բայց Երկիրս իր ունեցած Հեռանախոց զօրութեամբը միտ անէ՛ կ'ուզէ հեռանալ. որով ոչ կը մտնուայ Արևուն և ոչ կը հեռանայ, այլ անոր վրայ կը յըջի: Ինչ որ բարեկ Երկիրս և Արևուն Համար՝ նոյն օրէնքն է բոլոր տիեզերաց միջի աստեղաց և մոլորակաց Համար ալ:

Ծ. Զգողութիւնն երեք տեսակ կը բաժնուի: Առաջին՝ երբոր մտածուի իբրև տիեզերաց միջի շարժիչ զօրութիւն և տիեզերական կարգը հաստատուն պահող, այն ատեն կը կոչուի Տիեզերական ձողորմի կամ ծանրադրիւն. ուսկից իր ծաղին աստղաբաշխութեան հիմնական օրէնքները: Երկրորդն է՝ աստեղաց ունեցած ձողութիւնն, որով իրենց վրայի մարմիններն իրենց կը քաշեն. ինչպէս կը տեսնուք երկիրս վրայ՝ որ բոլոր վրայի եղած մարմինները դէպ իրեն կեղծոնը կը քաշէ, և ամեն մարմինը որ օրէն վրայ կ'իյնան. այս ձողութիւնը կը կոչուի ծանրադրիւն: Երրորդն է՝ մարմնոյ մը մասնակից մէջ եղած ձողութիւնը, որով մարմնայն հիւլէներն իրար ջով կը կենան. և այս ձողութիւնը կ'ըսուի մասնակիցական ձողորմիւն:

Զ. Կլաստն, որ երկնային մարմնոց շարժմանց զօրութիւնը գտաւ, երկու օրէնքով մեկնեց աւնոց շարժմանը.

Ա. Զգողութիւնն ուղիղ հասնեատորիւն ունի մարմնոց զանգրածոյն. որ է բռել, մարմն մը որ կը կռէ մէկ քիլոգրամ, իր ձողութիւնը երկրի մէկ քիլոգրամի է, թէ որ երկու, երեք և այլն քիլոգրամ է՝ իր ձգիչ զօրութիւնն ալ կրկնապատիկ, եռապատիկ է:

Բ. Զգողութիւնը խտտոր հասնեատորիւն ունի հեատորութեան քառապատայն. որ է բռել, որչափ որ մարմիններն իրարմէ հեռու բլայն այնչափ ալ իրենց ձողութիւնը նուազ է. և որչափ որ հեատորութիւնը քիչ, այնչափ ձողութիւնը շատ է. այսպէս մարմին մը, այս ինչ Հեատորութեամբ ուրի մարմնէ՛ ինչ ձողութիւնն աստակութիւն որ ունի, հեատորութիւնը կրկնապատկելով ձողութիւնն աստիպէ՛ն 4 անգամ նուազ կ'ըլլայ, եռապատկելով՝ 8 անգամ, այնչափ որ 2, 3, 4 անգամ հեատորութիւնն անելով, ձողութիւնն այն թիւերուն քառակուսայն չափով 4, 9, 16 անգամ կ'ընտարի:

Արդ այս երկու օրէնքն հետևանք կը հանենք թէ՛ մարմն մը քանի անգամ որ անելի զանգրած ունի ուրի մարմնէ՛ այնչափ անգամ աստիկ է իր ձողութիւնն, և զպզտի մարմինն իրեն կը քաշէ. և իրարմէ ունեցած հեատորութիւնն որչափ շատ բլայ՝ այնչափ ձողութեան

զօրութիւնը կը նուազի: Մարմն մը որ Երկիրս վրայ 3,600 քիլոգրամ կը կռէ, թէ որ լուսնոյ չափ Երկրէս հեռացրենք՝ 1 քիլոգրամ պիտի կռէ, որ է բռել Երկիրս 3,600 անգամ նուազ ձողութիւնն պիտի ազդէ այն մարմնոյ վրայ:

7. Կայ կ'ըսուի այն անկռելի ազլակը որուն ձեռքով կը տեսնենք տիեզերաց միջի մարմինները: Աստղներն ոմանք իրենց յատուկ լուսայլ կը տեսնուին, ոմանք ալ ուրիչ աստեղ լուսնոյն օգնականութեամբ:

8. Երկու տարբեր կարծիք կան լուսոյ էութիւնը բացատրելու Համար. մէկը կ'ըսուի որ տանտանուն որուն պայտպանն է Կլաստն, և միւրը ծածանաւուն զոր կը Հաստատուէ Կարգմանի և ուրիչ երեւելի բնութեան: Առաստուամբ կը կարծուի թէ այն լուսատու մարմիններն իրենց մէ անկռելի և ամենանուրբ նիւթ մը դէպ յամեն կողմ կ'արտադրեն. մարմնոց ոմանց մէջէն կ'անցնին առանց իրենց արագութիւնը կորսնցնելու, յոմանց ալ կ'արգելուին: — Եւ այս ամենանուրբ նիւթը կու գայ տեսութեան գործարանին վրայ, մաս մը ներս կը թափանցէ և տեսութեան զգացմունքը կու տայ մեզի: Իսկ ծածանմամբ կ'ենթադրուի որ այն լուսատու մարմիններն իրենց իրենցմէ մասնաւոր նիւթ մը գուրս չեն արտադրեր, այլ իրենց թրթռումունքն է որ կը հաղորդուի երեք ըստած առաւելական հոսանքիւն, որ ամեն տեղ տարածուած է. այս թրթռմամբ լուսոյ ամեն կողմ կը տարածուի և կը հասնի աչաց գործարանին: Ինչպէս որ ձայնակն մարմիններն իրենցմէ նիւթ մը գուրս չեն արտադրեր, այլ իրենց մասնակից թրթռումունքն է որ կը հաղորդեն օդին, և օդոյ ձեռքով՝ կը հասնի թրթռումունքը մեր լսելեաց:

Հատ ծածանակ առաջին դրութիւնն ընդունելի եղած էր, բայց Հիմա ընդհանուր երկրորդ դրութիւնն է ընդունելի:

9. Լուսն որչափ իր աղբիւրէն հեռանայ՝ այնչափ իր արագութիւնը կը նուազի, որով հեատորութեան քառապատայն հետ խտտոր Համատեություն ունի: Բռելմէր տանիմարագայն ատու դարապին Հայտով իմացաւ թէ լուսոյ մէկ մանր երկրորդի մէջ 77,000 մտոն կը վազէ. որով Արևուն մեզի համեմելու Համար 8 վայրկեան, 13 մանրերկրորդ կը տևէ. որ է բռել լուսոյ մէկ մանր երկրորդի մէջ ութ անգամ երկրին յրևապատը կը պտտուի:

Թէ որ Արևուն Թնդանօթ մ'արժուուէր շաբաթանակ իր արագութիւնն Հաստատր պահելով, 22 տարի հարկաւոր պիտի ըլլար մեզի հասնելու. և լուսոյ նոյն հեատորութիւնը 8 վայրկեան և 13 մանրերկրորդի մէջ կը կտրէ, որով կը տեսնուի թէ ինչ աստիճանի արագութիւն ունի լուսոյ:

10. Լուսոյ մի և նոյն յրկափիւտի մէջ ուղիղ գծով կը տարածուի, ինչպէս կը տեսնենք երբոր մուկ խոցի մը մէջ պզտի ծակէ մը լուսոյ ներս գայ, օդոյ միջի եղած փոխի կը ցուրնէ լուսոյ ուղիղ գծով ընթացքը: Բայց թէ որ մէկ յրկափիւտէ ուրիչ յրկափիւտ անցնի՝ այն ատեն իր ուղղութիւնը կը փոխէ, ուսկից ասով կու գայ բնկերկուն լուսոյ:

11. Բնկերկուն լուսոյ կ'ըսուի երբոր լուսոյ

ճառագայթ մ'անցնելով չբնորոշուէ մ' ուրիշ չբնորոշուէ իր ուղղութիւնը փոխէ. զոր օրինակ, օդէն անցնել իրոյ մէջ:

Արդ ենթադրանք թէ Գիկ ճառագայթ մը (Չև 2) ինչպիսի իրոյ մակարդակի վրայ, փոխանակ իր ուղղութիւնը պահելու կը խոտորի անէլ և կ'անունուի ուղղութիւնը: Հապտակաւ ճառագայթ մը իրոյ մէջ Գիկ ուղղութիւնն առնելէն ետև, իրէն դուրս փոխանակ նոյն ուղղութիւնը պահելու կը խոտորի կ'ի ուղղութիւնը:



(Չև 2)

12. Արդ՛հետև օդոյ կարգերն իրարմէ տարբեր խտութիւն ունին, ուստի երբ աստեղաց լոյսը կը մտնէ մեր մթնոլորտին մէջ՝ իր ուղղութիւնը չպահելու, այլ կը բեկանի, և քանի կը մօտենայ երկրի՝ այնչափ իր ուղղութիւնը կը փոխէ: Եւ որովհետև օդոյ կարգերն աստիճանաբար իրենց խտութիւնը կը փոխեն, անոր համար լոյսը յանկարծակաւ բեկեկուում չունենար՝ այլ շարունակաբար, որով կոր գծի ուղղութիւնը կ'աւանդուի. քնդհակառակն օդէն իրոյ մէջ անցնելով յանկարծակաւ բեկեկուում կ'ունենայ, որով իրոյ մէջ բեկեկուումն բեկեկաց գծով է:

13. Աստեղաց լոյսը դատարկութենէ անցնելով մեր մթնոլորտին մէջ, ճառագայթները կը բեկանին, որով մենք աստիճաբար իրենց բուն տեղայն վրայ չենք տեսներ:

Ինչպէս կը գտնուէ մեր ձևը (Չև 3), թ աստոր թ' աստղին տեղը կը տեսնենք: Բեկեկուումէն առաջ կու գան արշալոյսը և վերջապետ. նոյնպէս բեկեկումամբ աստղերը մեզի տարիկած և ձուռնա կ'երևան, և այս տարիկածութիւնը այնչափ աւելի է՝ որչափ Հորիզոնին մօտ է: Այս բաժնին լաւ կը տեսնենք Երբոր բարձր յերան մը վրայէն՝ ծովու եզերքէ՝ դիտենք արևու և լուսնի վրայ:



(Չև 3)

14. Երբոր հատուածակողմ ապակիով նայինք լուսոյ ճառագայթի մը վրայ, այն ձերմակ երևցած լոյսը, եօթը գեղեցիկ գոյներ բաժնուած կը տեսնենք: Այս բանս առաջ կու գայ՝ որովհետև արևուն ճառագայթն անցնելով հատուածակողմ ապակիէն, բեկեկումամբ իւրաքանչիւր գոյն իրարմէ կը բաժնուին և իւրաքանչիւրը տարբեր աստիճանով խոտորումն կ'աւանդուի: Արդ, թէ որ հատուածակողմ ապակի մ'այնպէս բռնենք՝ որ արևուն ճառագայթ մ'անկեղ անցնելով զարնէ հեռու եղած առարկայի մը վրայ, կը տեսնենք հոն եօթը գունով ժիրանի գօտի մը երկայն բարակ ձևով. այս երևոյթս կ'ըստի յուսապատկեր: Արուն մէջ թէպէտ անթիւ գոյներ կան բայց գլխաւորներն ասոնք են, մեծապէս

բեկեկումն առած գոյնէն սկսելով. մանուշակագոյն, շերտագոյն, իրադոյտ, կանաչ, դեղին, նարնգագոյն, կաշտիւր: Լուսապատկերին մէջ ամեն գոյն հաւասար տեղ չեն գրաւեր. ամենէն շատն է մանուշակագոյնն և ամենէն քիչը նաւորնիւրդոյնը: Արևն ըսել է թէ Արևուն լոյսը ձերմակ չէ, այլ եօթը գունով բաղկացած. բայց լուսոյ թթիւմանը պատճառաւ՝ գոյներն իրարմէն կը խառնուին, որով մեզի ներմակ կ'երևայ:

15. Գիծ լուսապատկերի կ'ըստի՝ լուսապատկերին գոյններն ուղղութեամբ ձգուած սե. գծե. ըլ: Ար և իցէ մարմին ըլլայ երկնային, ըլլայ երկրային՝ առանմահի լուսապատկեր ունի, և իրարմէ կը զանազանուին սե. գծերուն թուին և շարքէն: Չոր օրինակ, ուրիշ է արեգակն լուսապատկերը, ուրիշ է աստեղացը: Իսկ լուսնոյ և մոլորակաց որ արեգակէն լոյս կ'առնուն, իրենց լուսապատկերն այ նոյն է արեգակն լուսապատկերին հետ: Արեգակաց գիծերը փայլուն և գունաւոր են, անմար քիչ ոմանք լաւ գիծ ունին:

16. Այ միայն արեգակն լոյսը, այլ որ և իցէ լոյս կրնայ լուսապատկեր մը տալ. ուստի մե. տաղի մ'աղն այրելով՝ կու տայ լուսապատկեր մը, որ իրեն գոյնեղովն ու գիծերովն այն մարմնոյն յատուկ լուսապատկերը կ'ըլլայ. ինչպէս օրինակի համար, սուրջ լուսապատկերը նոյն չէ արծաթի լուսապատկերին հետ. ասկէ Քիլիսոն և Պունսէն հետևեցուցին՝ թէ լուսապատկերին յատուկիւնէն կրնայ հանդուրիլ այն մարմնոյն բնութիւնն ուսկից այս լոյսը կ'ելլէ: Այս գիւտն ըստեցաւ վերլուծարիւն լուսապատկերի, որ դա. լուս գրեթէ ամենէն հրաշալի և հաննարեղ գիւտն է:

17. Լուսապատկերի վերլուծութիւնը մեր այնպէս սովն հրաշալիք մը կը բանայ. մեզմէ միկու նաւոր ըզոններով հեռու եղած մարմնոց քի. միական թաղադրութիւնը, իրենց վրայ եղած յանկարծակաւ փոփոխութիւնները տեսնել պտտի գործիքով մը, որ հաղորդուած է լուսով այն մարմնոց հետ ինչպէս հեռագրի թելով մը: Ասով է որ հանդուրեթէ արեգակը և աստղերը քիչ շատ մեր գծաին վրայ զանուող մարմիններէն կը կազմուին, ինչպէս է՝ թթումին, ջրածին, բնածուխ, երկաթ, սուր, մագնէս և այլն: Ինչպէս որ Քիլիսոն և Պունսէն իմացան որ արեգակն լուսապատկերն մէջ կը գտնուին երկաթ, քրոմ, նիքել, բայց ամենէն աւելի՝ երկաթ. իսկ արծաթ, պղինձ, գինի և կապար չեն գտնուիր: Հոս բաւական ըլլայ լուսոյ և լուսապատկերի վրայ այս համառօտ տեղեկութիւնը, յետոյ առե՛ծ պիտի ունենանք նորէն յիշելու:

### Գ Լ Ո Ւ Խ Ա

## Շարժումն Օրական

Ա

1. Ինչ է Հորիզոն. — 2. Ինչ է զագարեանս յեաց, Չենիդ և Նատիր. — 3. Միջօրեայ. — 4. Ինչպէս կրնանք տեղոյ մը միջօրեականը գտնել:

1. Թէ որ մէկը պայծառ օր մը կամ գիշեր մը այնպիսի տեղ մը գտնուի, որուն շորս կողմն ար. գեղք մը չըլլայ աչքին, ինչպէս ծովու վրայ, կամ ընդարձակ դաշտի մը մէջ, իր աչքը որպիսի որ կորէ շորս կողմը պտտացնելով, կը տեսնէ որ երկինքն իբր գմբէթ մը կու գայ կը հանգի երկրի վրայ. որով կ'երևի թէ երկինքն երկրիս հետ կպած է: Այս երևոյթով՝ դիտողին շորս կողմը բոլորաձև չըլլապատ մը կը ձևանայ, որ կ'ըսուի Հորիզոն զգալի, նկատմամբ դիտողին կամ այն տեղւոյն ուր դիտողը կը գտնուի: Արով ըսել է՝ թէ որ դիտողը չորս փոխէ, Հորիզոնն ալ կը փոխուի: Այս գմբէթին վրայ անհամար աստղեր կը տեսնուիք, որոնք միիծմար օր մը տեսնելով հետուէն մեզմէ, և մեր ու անոնց մէջ կայ երկրիս մթնոլորտը: Թէ որ տեղեւնիս չփոխենք, աս. կայն աստղոց ելլալով և մտնելով՝ աստերա. գարը կամարը կը փոխուի, որուն վրայ պիտի խօսենք քիչ վերջը:

Թէ որ օրուան մէջ ընենք այս դիտողութիւնը՝ կը տեսնանք որ Արևն երկրիս Հորիզոնին մէկ կէտէն կ'ելլէ և միւս կէտը կը մտնէ: Բայց լաւ կ'ըլլայ թէ որ պայծառ գիշեր մը դիտենք աս. տեղաց չարժմուներ: Արդ կը տեսնանք որ աստղերն երկրիս Հորիզոնին մէկ կողմէն կ'ելլեն կը բարձրանան մինչև գլխոյն վրայի ուղղութեամբ, և ապա վայրկեան մը Հորիզոնական ընթացանքն ենու, կը սկսին ելած կողմերուն հակառակ կողմէն իջնել: Այս կերպ Գարեբեկի վրայի երկու գլխաւոր կողմանց դիրքը. որ է ըսել երկրիս Հորիզոնին մը կողմէն օր կ'ելլեն Աստղերը, Լուսինը, Արևն՝ այն կողմը կ'ըսուի Արևմտք. և ուր որ կու գան կը մտնեն Արևմտքը:

2. Թէ որ գերձանի մը ծայրը կապարէ ծանրոց մը դնելով և միւս ծայրէն վեր բռնենք, կը տեսնանք որ գերձանը շիտակ ուղղութիւն կ'առնու գեղջ մը կ'երկրիս. գերձանին այս ուղղութիւնը կոչի զագարեանոյնաց ուղղութիւն:

Արդ դիտողին կեցած տեղւոյն վրայ գերձանը բռնած ծայրը երկնցքնելով մազովնիս մինչև որ երկնից կամարին մէկ կէտը դաշլ՝ այս կէտը կ'ըսուի Չենիդ (զագարեանկէտ) դիտողին տեղւոյն և միւս ծայրն ուր կապարէ ծանրոցը կախուած է՝ երկնցքնելով մտնելով, որուն ուղղութիւնը կ'անցնի երկրիս կեդրոնէն և դիտողին կեցած տեղւոյն շիտակ հակադիր կողմէն անցնելով՝ կ'երթայ կը յօշափէ երկնից երեսը կէտ մը, այն կէտն ալ կ'ըսուի Նատիր (տեղակէտ), փասն զի երկնից կամարը ամբողջ երկրագունտը կը շրջապատէ:


Որքան ըսել է որ այս գերձանին ուղղութիւն

նր մակարդակ մակերևութին վրայ, ինչպէս է ծովու երեսին կամ դաշտին վրայ, ուղղահայեաց է: Ուսկից կը հետևեցնենք թէ կրնանք Հորիզոնը սահմանել նաև այսպէս. բոլորաձև մակարդակ մը՝ որ ուղղահայեաց է տեղւոյն գա. զագարեանոյնացին: Չէնիդը հաստատ հետաւորութիւն ունի Հորիզոնին ամեն կէտերէն: Ար է ըսել կ'էթ գէնիթէն այլևայլ աղեղներ ձգենք դէպ'ի Հորիզոն, այս աղեղանց ամենուն մեծութիւնը է 90°:

3. Ինչպէս որ առավ բոխը, աստղերը, Արևը, Լուսինը ամեն օր Հորիզոնին արևելեան կողմէն կ'ելլեն և ամբողջ երկնից կամարը շրջելէն ենու արևմտեան կողմը կու գան կը մտնեն: Աստղերն ընդհանուր ամեն ժամանակ Հորիզոնին նոյն կէտէն կ'ելլան և նոյն կէտէն կը մտնան: Բայց կը տեսնանք որ Արևն այս կանոնն կը զարտուղի, տարւոյն ամեն օր Հորիզոնին տարբեր կէտէն կ'ելլէ և տարբեր կէտէն կը մտնէ: Արով ըսել է՝ թէ տեղոյ մը համար Արևն ամեն օր կէտը եղած ատեն նոյն ատիճանի չի բարձրանար երկնից երեսն՝ այլ զանազան բարձրութեամբ: Սակայն ամեն կէտը ատեն Արևն աննէն բարձր կէտը կը գտնուի և կ'անցնի հաստատուն մակարդակի մ' ուղղութեան վրայէն, որ զագարեանոյնաց կեցած է դիտողին տեղւոյն. և այս ուղղութիւնը կոչի Միջօրեայ, որ տեղոյ մը համար հաստատուն է, և որուն մէկ ծայրը կ'անցնի երկրիս մէկ բևեռէն և միւս ծայրը մէկայ բևեռէն: Էթէ երևակայենք շրջանակ մ' որ միջօրէի ուղղութիւնը ցուցնէ՝ անցնելով երկրիս երկու բևեռներէն, այս շրջանակը կոչի Միջօրեական: Վերի ըսածներէն կը հետևեցնենք որ երկրագունտին վրայ ամեն տեղ ասան ձին միջօրեայ և միջօրեական ունի:


4. Ինչպէս վեր բոխը, Արևն ամեն օր նոյն ժամուն շտանուր միջօրեականին նոյն կէտին վրայ. անոր համար թէ որ մէկն ուղեւոյ տեղւոյ մը միջօրեականին ուղղութիւնը գտնել չկրնար ժամացուցով իմանալ թէ Արևը միջօրեականին վրայ կը գտնուի թէ չէ: Այս պատճառաւ կարևոր է մասնաւոր կերպով գտնել այն վայրկեանն յորում Արևն այն օր իր բարձրագոյն կէտը կը գտնուի: Դնենք հաս պարզ կերպ մ'որ ամեն մարդ կրնայ ընել:

Վակարդակ մակերևութի մը վրայ, ինչպէս է լայ երեսը, դիր ձող մը Գ.Գ կատարեալ ուղղահայեաց մակարդակին (Չ. 4). և ապա կէս



(Չ. 4)

օրէն առաջ, զոր օրինակ, ժամ մ' առաջ, նայե-  
թէ ձողին շաքը մինչև ուր կ'երթայ, այն կէտը  
նշանակէ Ս: Ապա շարունակ դիտելով կը տես-  
նաս որ ձողին շաքն երթալով կը կարծրնայ, և  
յետոյ նորէն կը սկսի երկննալ՝ բայց առաջուան  
դիրքէն խտորնելով: Երբոր շաքը հասնի ատա-  
ջուան ունեցած երկայնութեան, այն Բ կէտն  
ալ նշանակէ. և այս երկու կէտերը միացուր  
երկու գծով՝ ձողին Գ ուղիւն հետ. Ելած ան-  
կիւնք երկու հասասար մաս բաժնէ. և ՊՄ կրրի-  
նակերձք շրտակ երկնցուր երկու կողմէն: Այս  
գծին կ'Մ ուղղութիւնը՝ կը ցուցնէ նոյն տե-  
ղւոյն միջօրէականին ուղղութիւնը: Այս միջ-  
օրէական գծին այն ծայրն որուն վրայէն Արևն  
անձու՝ այն ծայրը կ'ըսուի Հարաւ, և միւս ծայրն  
Հիւսիս. և թէ որ միջօրէականին ուղղակայեաց  
գիծ մը քաշելու  
ըլլանք, այս ուղ-  
ղակայեացին աջ  
կողմի ծայրը կ'ը-  
սուի Արև. երկնակ  
կէտ, և ձախ կող-  
մի ծայրն Արև. մի-  
տեակ կէտ, են.  
Թաղրելով որ ե-  
րեսնին հիւսիս  
դարձուցած ը-  
լլանք:



(ՉԷ 5)

ինչպէս գերն ը-  
սինք՝ Արևը տա-  
րւոյն ամեն օրը Հո-  
րիզոնին տարբեր  
կէտէն կ'ելլէ, և  
տարբեր կէտէն կը  
մտնայ. ուստի  
տարւոյն մէջ միայն  
երկու որ կայ որ  
արևելեան կէտէն  
կ'ելլէ և արևմը-  
տեան կէտը կը  
մտնէ: Ատր վրայ յետոյ երկարօրէն պիտի խօսինք:  
Կերբ գտած երկրիս գլխաւոր չորս կէտերը՝  
Արևելք, Արևմուտք, Հիւսիս, Հարաւ, կողին  
կողմունք աշխարհի: Բայց ամեն տանն հարկ չէ  
այս չորս կողմունքը գտնալու համար գործածել  
գիծի սուած կերպը, կայ կողմնացոյց բուսած  
գործիքը (ՉԷ 5), որուն միջի մագնիսական սա-  
ղան մէջ ծայրը  
կը ցուցնէ հիւ-  
սիսային կողմը,  
ուսկից կրնանք  
մնացած մէկալ  
կողմունքն ալ  
գտնել: Այս մագ-  
նիսական սաղան  
վրայ կայդուցած  
են թղթէ բոլո-  
րակ մը, որուն  
վրայ աստղաձև  
գծուած են 32  
գիծ, որոնց իւ-  
րաբանիչուր կը  
ցուցնէ 32 հովն.



(ՉԷ 6)

րու ուղղութիւնն որ աշխարհիս չորս կողմէն  
կը փնէ, անոր համար ալ կ'ըսուի նաև ձող-  
մանի: Մագնիսական սաեղը հանելով այս  
թղթով կեցած է հասաստուն կէտի վրայ, և  
կրնայ ազատաբար շրթի որ կողմն որ դարձնեն:

Արդ այս հողմանիին վրայ նայելով կրնան  
մէկէն նոյն տեղւոյն հիւսիսային կողմը զըտ-  
նել, այսինքն դէպ' իր կողմը որ հիւսիս ցուցը-  
նող կէտը դարձած է. նոյնպէս մէկալ կող-  
մունքն ալ որ արդէն վրան նշանակուած են:  
Որովհետև Արևն, աստղերը կ'անցնին ամեն  
օր միջօրէականէն, իւրաբանիչուր աստեղ ցուցու-  
ցած աստեղայիթ ուղղութիւնը, նկատմամբ միջ-  
օրէական մակարդակին չափակցեալ է: Այսինքն,  
ենթադրենք որ ըլլայ ԱՅ հորիզոնը (ՉԷ 6), և  
աստղ մ' ելլալով հորիզոնին Բ կէտէն սկսի բար-  
ձրանալ, անցնե-  
լով կարգաւ Գ,  
Դ, Ե բարձրու-  
թեանէն, և սպա-  
ն՝ Չ գագաթնա-  
կայեաց կամ միջ-  
օրէականէն և  
անցնելով, սկսի  
իջնալ Դ, Գ՝ կէ-  
տերէն մինչև որ  
հորիզոնին Ա կէ-  
տէն անդին ան-  
երևոյթ ըլլայ:  
Արդ Գ և Գ՝ կէ-  
տերը նկատմամբ  
Չ Ն մակարդա-  
կին կ'ըսուի ն  
չափակիցը, նայն-  
պէս Գ և Գ՝ կէ-  
տերը և այլն. ու-  
րեմն ընդհանուր  
կրնանք բայ, որ  
աստղի մը շրջանը  
միջօրէական մա-

կարողէն երկու հասասար մաս բաժնուած է  
և չափակցեալ է նկատմամբ միջօրէական մակ-  
արդակին:

Բ


1. Ինչ կերպով կը շարժի երկնից կամարը. —
2. Ստղը րևեալային. Ստանցք աշխարհի. —
3. Չազգանեականք երկնայինք. — 4. Ստղերը  
հաստատուն արագոշրտակը կը կորնէ այս գոն-  
գանեականքը. — 5. Մակարդակ հասարակածի.  
— 6. Անկիւնային ինչաւորութիւն աստեղաց:

1. Նախընթաց գլխոյն մէջ գտանք երկնից  
երեսը չորս գլխաւոր կէտերը, կողմունք աշխար-  
հի, դարձնալ միջօրէականն և հորիզոնը. ուստի  
հիմա կրնանք աւելի ձիւր քննութիւն մ'ընել  
երկնից աստեղաց շարժման վրայ:  
Իրեանց նորէն մեր դիտողին հետ, անյուսին  
և պայծառ գիշեր ատեն այնպիսի տեղ մ' ուս-  
կից հորիզոնն անարգել տեսնուի. և ենթադրենք  
որ գտնուինք հիւսիսային կիսագնդուն քաղա-  
քաց մէկուն մէջ, զոր օրինակ Միլան:

Գարունները երեսնիս դէպ 'ի հարաւ և հորի-  
զոնին վրայ առնուով մեզի մաս մէկ առարկայ  
մը, ինչպէս ծառ մը կամ մաս մը ծիանը, այս  
առարկան արեւելեան կողմն ըլլայ, և ասող մը  
ժառնի ետևն, հորիզոնին վրայ: Ար տեսները  
որ աստղը կամաց կամաց կը բարձրանայ ծա-  
ռէն վեր, կը հեռանայ անկէ, ապա շարունակե-  
լով բարձրանալ մինչև միջօրեականին վրայէն  
անցնի, յետոյ կ'իջնայ հակառակ կողմը, և հո-  
րիզոնին արևմտեան կողմէն կ'աներևութանայ:  
Հարունակները մեր դիտողութիւնն ուրիշ աստե-  
ղաց վրայ, կը տեսները մի և նոյն շարժումներն,  
իւրաքանչիւր ասող մէյակ աղեղան վրայէն ի-  
րեն ընթացքը կը կատարէ. միայն որչափ որ հա-  
րաւային քանոնն մօտ երթանք աչքով այնչափ  
ալ կը տեսները որ աստեղաց աղեղները կը պրզ-  
տիկանան. հարաւային քանոնն մօտ աստղերը  
պզտի աղեղ մ' ընթանալէն ետև կը մտնեն հո-  
րիզոնէն, և կան որ ելլալէն քիչ մը վերիը շու-  
տով կը մտնեն: Իսկ որչափ որ դէպ յարեւելք  
գտնուի, այնչափ ալ աստեղաց կողմած աղեղները  
կը մեծնան, մինչև ամենէն մեծը՝ որ արեւելեան  
կէտէն մինչև արևմտեան կէտը կ'երթայ, անց-  
նելով գիտողին գէնիթէն, կը կտրէ կիսաշրջա-  
պատ մը, որ 13 ժամ ամբողջ կը տևէ: Յետոյ  
որչափ դէպ 'ի հիւսիս մտնենք, աստեղաց կտու-  
րած աղեղները կը մեծնան, կամ լաւ ևս կ'ամ-  
բողանան. որովհետև որչափ որ դէպ 'ի հիւ-  
սիս աչքով մտնենք, այնչափ ալ աստեղաց  
կտուրած աղեղները մեր հորիզոնէն վեր մեծ կ'ըլ-  
լան, որով հորիզոնէն վար շրջապատաց մնացած  
պզտի աղեղները կ'ընթանան. անով մտնալէն  
ետև շուտով ալ կ'ելլեն, մինչև որ հիւսիսային կէ-  
տին մօտ եղած աստղերը մէյակ մամրող շրջա-  
պատը կը կտրեն հորիզոնէն վեր: Արով այն աստ-  
ղերը գիշեր ու ցորեկ մեր հորիզոնէն կ'երևան,  
բայց ցորեկն արևու. լայն արեւելք կ'ըլլայ մեզի  
գտնուի տեսնելու:

2. Արդ հիւսիսային կէտին մօտ եղած աս-  
տեղաց շրջապատներուն ամենէն փոքրագունին  
կտրոնը կը գտնուի աստղ մ' որ ամենեկին շար-  
ժիք, որ կոչի քանոնային աստղ. միւս աստղերն  
աստը շար կողմն իւր կտրոն արած կը շրջին:  
Ըթէ երևակայենք այս քանոնային աստղէն զիծ  
մ' որ գայ անցնի երկրի կեդրոնէն, այս զիծը  
կոչի ասպնջը այխարհի, որուն միւս ծայրն եր-  
կրիս հակառակ կողմէն մինչև երկիրը հաստա-  
տուն կէտ մը կը հեռանայ: Առանցքին այն ծայ-  
րը որ քանոնային աստղը կը շոյափէ, կոչի հիւ-  
սիսային քանոն, և անոր հակառակ կողմն հա-  
րաւային քանոն: Արդ ենթացքին այն գիտողին  
կեցած տեղը ըլլայ (Չև 7) երկրագնդիս վրայ  
էլ, ուսկից ուղղահայեան որ հանելով երթայ  
մինչև Չ կէտն որ կոչի Չէնթիթ, որուն հակապո-  
ծայրն երկրիս միւս կողմէն է Ն կէտն, որ կոչի  
Նտոթի: Այս է կէտին հորիզոնն է Միկանու  
հորիզոն քուտած շրջապատը. զիստ կը ենթա-  
գրեցնիք որ դիտողը Միկան գտնուի, որուն ձախ  
կողմն հիւսիս և ավ կողմն հարաւ կ'իջնայ: Արդ  
անցնէ աստի Միկանու հորիզոնի վրայ այլևայլ  
աղեղներով արեւելէն դէպ յարեւմուտք կ'եր-  
թան, ինչպէս որ մեր ձևին միջի շրջապատները  
կը ցուցնեն, ուսնք մեծ աղեղով, ուսնք պրզ-

տի: Ինթպարները որ հորիզոնին արեւելեան Ա  
կէտէն աստղ մ' ելլայ և բարձրանալով մին-  
չև միջօրեականն ա-  
պա սիսի վրայ իջնէ:  
Ինչպէս որ պարտնե-  
տերուն ուղղութիւնը  
կը ցուցնէ: Արդ որ  
հասնի արևմտեան  
Բ կէտին, դիտողին  
համար հորիզոնին  
վրայ կը գտնուի այն  
աստղը, ուսկից քիչ  
մ' ալ վար իջնալով, աներևոյթ կ'ըլլայ դիտողին  
համար: Իսկ դէպ 'ի հիւսիս կտուր երթալով աս-  
տեղաց կտուրած աղեղները կամաց կամաց կ'ամ-  
բողանան. մինչև որ կէտ մը կը հասնի որ աս-  
տեղաց կտուրած շրջապատը հորիզոնէն վեր է,  
ինչպէս կը տեսնուի ի՞նչ շրջապատին վրայ:




(Չև 7)

Այս տեսակ աստեղաց մէջ, որունք հորիզոնէն  
վար չեն իջնար, կայ աստղ մ' որ ամենեկն իր  
շարժիքի, և ասիկայ է քանոնային աստղը, ուսկից  
զիծ մը ձգելով ԲԲ' կ'անցնի երկրիս կեդրոնէն,  
որուն վրայ կը շարժուի բոլոր աստղերը, իւրա-  
քանիցն իր շրջապատին վրայէն:

Մնէք ենթադրեցինք որ գտնուիք երկրիս  
հիւսիսային կիսագնդին վրայ, ինչպէս է Միկանու  
մէջ: Բայց թէ որ մեր տեղը փոխենք դէպ 'ի հիւ-  
սիս, հորիզոնն ալ կը փոխուի, որով այն աստ-  
ղերն որ Հարաւային կողմէն կ'երևային, անուր  
երթալով աներևոյթ կ'ըլլան, հորիզոնէն վեր  
չեն ելլար. իսկ դէպ 'ի հիւսիսային կողմն աստ-  
ղերն երթալով հորիզոնէն չեն մտնել, և կը  
շատուի այն աստեղաց թիւն որ հորիզոնէն վար  
չեն իջնար:


Իսկ թէ որ երկրիս քանոնն վրայ գտնուիք  
(Չև 8), այն աստե՞ն քանոնային աստղը գէնիթի  
կ'ունենանք և աշխարհիս ասանցքը կ'անցնի  
մեր գլխէն, որով



(Չև 8)

հիւսիսային կիսա-  
գնդին ամբողջ  
աստղերը կը տես-  
նենք որ մեր շարս  
կողմը կը պարտնին  
առանց ամենեկին  
մտնելու. իսկ հա-  
րաւային կիսագն-  
դին աստղերն ա-  
մենեկին հորիզո-  
նէն վեր չեն ելլար:

Իսկ ընդհակա-  
ռակն (Չև 9) թէ  
որ դէպ 'ի հարաւ  
երթանք, հիւսի-  
սային աստղերն եր-  
թալով հորիզոնէն  
վար կ'իջնան և հա-  
րաւայինները կը  
բարձրանան:



(Չև 9)

Արդ դէպ 'ի հա-  
րաւ երթալով են-  
թարեւք որ գը-  
տնուիք երկրիս

Հասարակածին վրայ, այն ատեն երկու բեւոռներն Հորիզոնին վրայ պիտի գտնուին, և ամեն աստ-  
ղերը պիտի տեսնենք որ կ'երևն ու կը մտնեն և  
որոնց չլրագատները Հորիզոնին վրայ կէս կը  
բաժնուին, այնպէս որ ամեն աստղ իր չրկապա-  
տին կէսը Հորիզոնէն վեր կ'ընթանայ և միւս  
կէսը Հորիզոնէն վար. որով պիտի չունենանք  
աստղ մ' որ Հորիզոնէն չմտնէ:

Այսպէս երկնից երեքս ամբողջ աստղերն ա-  
ռեւելեան ղէպ յարմարաց այլևայլ աղեղներով  
կ'ընթանան, բեւոռային աստղը կեդրոն առնե-  
լով, որով կրնանք ըսել թէ ամբողջ երկնից կա-  
մարն աշխարհիս առանցքին վրայ կը շրջի 24 ժա-  
մու մէջ, դիտողին գլխոյն վրայէն, որ միշտ եր-  
կրիս կեդրոնը կը գտնուի. այս է աճա օրաբան  
շարժումն ըստ ը:

7. Վերը տեսանք որ իւրաքանչիւր աստղ ա-  
ռանձին աղեղան մը վրայէն իրեն չրկանը կը  
կատարէ մեր Հորիզոնէն վեր, որով չրկապատին  
մնացած աղեղն մնար մեր Հորիզոնէն վար. և  
թէ ամեն աստղ բեւոռային աստղը բարորտիքը  
կը շրջի իբր կեդրոն առնելով, ուրեմն ըսել է՝  
թէ բարս աստղը համակեդրոն չրկապատներ  
կը կորուին: Արեւն երկնային զուգանձադանք  
կոչին աստեղաց կարած չրկապատները, որով  
Հեռու ամենքն ալ իրարու զուգահեռականք են:  
Երկնային զուգահեռականաց մակարդակներն  
ուղղահայեաց են աշխարհիս առանցքին, ու  
րոնց կեդրոնները կը գտնուին նոյն առանցքին  
վրայ. ինչպէս որ վը տեսնուի վերի ձևոց մէջ:

4. Աստղերն հաստատուն ժամանակով կը  
կարեն իրենց աղեղը. այսինքն ամեն աստղ հա-  
ւասար ժամու մէջ հաստատար աղեղ կը կորէ,  
որով կրնանք ըսել թէ աստեղաց պարզութիւնը  
միշտ նոյն է: Աստ-  
ղերն իրենց չրկա-  
նին մէջ ամեն օր  
կ'անցնին միջօրէա-  
կանին վրայէն, հօն  
կը հասնին իրենց  
ամենէն բարձրա-  
գոյն կէտը, անկէ  
անդին կը սկսին  
վար իջնալ: Այս  
կէտին վրայ հա-  
սած ժամանակը  
կ'ըսենք թէ աստղն  
իրեն բարձրագոյն  
կէտին հասած կամ  
անցք միջօրէակա-  
նի է: Իւրաքան-  
չիւր աստղ քսան  
և չորս ժամու մէջ  
երկու անգամ միջօրէականէն կ'անցնի, որոնց  
մէկը կ'ըսուի անցք վերին և միւսն անցք ստո-  
րին:

8. Աստղերն, ինչպէս վերը բոլոր, մեր Հորիզո-  
նին վրայ տարբեր աղեղներ կ'ընթանան, ամե-  
նէն մեծն է՝ որ արեւելեան կէտէն մինչև արեւ-  
մտեան կէտը կ'երթայ: Արդ ենթադրենք որ  
մակարդակ մ'անցնի այս մեծ աղեղան ուղղու-  
թեամբ, կը տեսնենք որ այս մակարդակն ուղ-  
ղահայեաց կ'ըլլայ միջօրէականին և զայն երկու

Հաստար մաս կը բաժնէ: Այս մակարդակին  
ուղղութիւնը կոչի մակարդակ երկնային հասա-  
րակածի:


6. Աստեղաց անկիւնային Հեռաւորութիւն ը-  
սելով կ'իմանանք երկու որ և իցէ աստեղաց  
միջի եղած Հեռաւորութիւնը: Վասն զի այն եր-  
կու աստղէն եկած լուսոյ ճառագայթները դի-  
տողին աչքին մէջ անկիւն մը կը ձևացնեն, այս  
անկեան մեծութիւնը կը ցուցնէ այն երկու  
աստեղաց իրարէ ունեցած Հեռաւորութիւնը:  
Ուսկից առաջ կու զայ որ աստղերն որպիսի ի-  
րարմէ Հեռու ըլլան այնպիսի անոնց Հեռաւո-  
րութեան անկիւնը կը մեծնայ: Աստեղաց զանա-  
զան Հեռաւորութիւնը չափելու համար կրնանք  
այսպէս պարզ կերպով կատարել. կ'առնուիք  
որ և իցէ մետաղէ սկաւառակ մը (Չե. 10), որուն  
վրայ աստիճանը, մասուի և մանրամասունք  
բաժնուած ըլլան և որուն վրան ըլլայ դիտակ  
մը, այնպէս որ կարենայ սկաւառակին կեդրո-  
նին վրայ շարժել: Դիտակը զոյս աստիճան  
գնեղէն ետև: Հաստատուն րոճած կը նայինք  
այն երկու աստեղաց մէկուն և ապա դիտակը  
միայն կը զարձեննք մինչև որ միւս աստղը  
տեսնանք: Յետոյ կը նայինք չրկանակին վրայ  
թէ դիտակը զոյս աստիճանէն մինչև որ աս-  
տիճան գնաց. այս թիւը կը ցուցնէ այն եր-  
կու աստեղաց մէջ եղած Հեռաւորութիւնը:  
Այսպէս որ և իցէ երկու աստեղաց մէջ եղած  
անկիւնային Հեռաւորութիւնը կրնանք չափել:

Աստեղաց իրարմէ այս յարաբերական Հեռա-  
ւորութիւնը օրուան ամեն ժամը, տարւոյն ամեն  
օրը մի և նոյն է և ամենեկին չի փոխուի: Այս  
պատճառաւ է որ այս աստղերն հաստատուն  
կոչուած են: Մեր Թուականէն հարիւր քսան



(Չե. 10)

տարի առաջ Հիւլ-  
պարբոս 3026 աւ  
տեղաց Հեռաւո-  
րութիւնը, և ըստ  
այնմ համեմատու-  
թեան գծագրած է  
գնտի մը վրայ զա-  
նոց: Դոյն ասե-  
նուան չափունքն  
այնպիսի ճիշդ են՝  
որ Հիմա նորէն չա-  
փելով ամենաուշ-  
ինչ տարբերու-  
թիւն կը գտնուի:  
Ուրեմն ըսել է՝ թէ  
աստղերն երկնա-  
յին կամարին վրայ  
ընթանալու ատեն՝  
միշտ հաստատուն կը պահեն իրարու յարա-  
բերական Հեռաւորութիւննին, որով միշտ նոյն  
կարգն ունին: Բայց յետոյ պիտի տեսնենք որ  
այս բանիս ալ զարտուղութիւն մը կայ:



Երկնային կամար եւ իրեն գլխավոր շրջանակները :

( 24 11 )

1. Ինչ է աստղային օր . — 2. Ինչ է միջօրեակն համար . — 3. Ինչ են ժամանակի քայտերը . — 4. Ինչ է ուղիղ ելք և խտությունն աստղային :

1. Աստղային օր կ'ըսուի այն ժամանակն որ կ'անցնի աստղ մը՝ միջօրեականին վրայ երկու անգամ երևնալով :

Քրոմկետե աստղերը միշտ հաստատուն չըլան ունին՝ անոր համար այ այս ժամանակը միշտ հաստատուն է . 24 մաս բաժնուած է , որուն իւրաքանչիւր կտի ժամ , իւրաքանչիւր մէկ ժամը 60 մաս , որ կտին վայրիեանք , և իւրաքանչիւր վայրիեանք 60 մանրերկրորդ :

Աստղային օրը քիչ մը պզտիկ է սովորական օրէն , զոր յետոյ երկրիս վրայ խօսելու ատեն պիտի տեսնենք . քայք միշտ հաստատուն ըլլա-

լուն համար՝ աստղաբաշխը ասով իրենց գործիքները կը կանոնաւորեն , ինչպէս է ժամացոյցները , ժամաչափներն , և այլն : Կան նաև ժամացոյցներ որ կը ցուցնեն աստղային ժամերը : Էւ որովհետև այս տեսակ ժամացոյցներն եղանակի փոփոխութենէ , շարժմունքէ , և այլն , ետև կը մնան կամ առաջ կ'երթան՝ ուստի կանոնաւորելու համար հարկաւոր է նորէն դիտել աստեղ մը անցըր :

Աստղային օրը չափելու համար պէտք է երկրի սիւնը երեսը կէտ մ' առնուլ , ինչպէս աստղաբաշխը կ'առնուն երկնային հասարակածին վրայ կէտ մը և ասոր միջօրեականէն անցնելէն կը սկըսին հաշուել մինչև միւսանգամ անցնելը : Արդ այս կէտին միջօրեականին վրայէն անցնելու ատեն , պէտք է որ աստղային ժամերը ցուցնող ժամացոյցներու լեզուակները Օ՛ , Օ՛ , Օ՛ վրայ գտնուին , և թէ մէկ անգամ ամենայն ճշգրտութեամբ հաշուենք այն կէտին միջօրեականին վրայէն երկու անգամ անցնելը , այն ատեն դիւ-

րին կ'ըլլայ ուրիշ անգամ ժամացոյցներուն ճշանակները կանոնաւորել, և ասկայն սպակով ըլլալու համար զանի մ'անգամ նոյն փորձը կրկնելու է:

2. Ատեղաբաշխութեան մէջ աստեղաց միջօրէականէն անցնիլը զիտելու համար կը զործածուի Միջօրէական դիտակ բաւածը: Այս գործիքն ուրիշ բան չէ, բայց եթէ մեծ դիտակ մը ՄՊ, որ ԱՔ հորի զոնական առանցքին ծայրերով կեցած է Փ և Դ պատէ յենարանաց վրայ (Ձև 12), և կրնայ ազատարար դառնալ ինքն կը վրայ, այնպէս որ եթէ զիտակը տեղւոյ մը միջօրէական մակարդակին ուղղութեամբ դընենք, կրնայ ինքի վրայ զառնալով միջօրէականին ամեն մէկ կէտէն անցնիլ, և միտ տեսութեան առանցքն ուղղակայեաց կը մնայ հորի զոնական առանցքին: Արդ այս գործիքով կրնանք որ և իցէ աստեղ միջօրէականէն անցնիլը տեսնել և երկնային զուգահեռականի բալոր աստղերը կարգաւ կու գան կ'անցնին դիտակին տեսութեան առանցքին վրայէն: Թէ որ երկնային զուգահեռականի մ'ամեն աստղը կ'անցնի միջօրէականէն, ուրեմն օրական շարժման մը կամ 24 ժամուան մէջ իւրաքանչիւր աստղ կ'անցնի միանգամ միջօրէականէն, և երկնային զուգահեռականը 24 մաս բաժնելով աստղ մը մէկ ժամու մէջ չըլլալսպտին 1/24 մասը կը կտրէ կամ 15 աստիճանը:


3. Ատեղաբաշխք ամբողջ երկիւրթին երեսը 24 կիսաբոլորակ բաժնած են, իւրաքանչիւր հասարակապէս 15 աստիճան հեռու, և միջօրէականին ուղղութեամբ և թևեռէ թևեռ ձգուած են, որոնց ամեն մէկը կարգաւ կու գայ կ'անցնի միջօրէականին վրայէն: Եւ որովհետև ամեն կիսաբոլորակ մէկ ժամու ետև կ'անցնի միջօրէականէն՝ անոր համար այս բոլորակները ժամական բոլորակք բաւեցան: Ժամական բոլորակները կը սկսին հասարակածին Օ աստիճանէն, և կ'անցնին երկրի առանցքէն և երկնից երկու թևեռներէն. ստով իւրաքանչիւր երկնային զուգահեռականները 24 հասարակ աղեղներ կը բաժնեն, որոնց մեծութիւնն է 15 աստիճան: Եւ որովհետև աստղերն իրենց իրարու յարաբերական հեռաւորութիւնը չեն փոխեր, ուրեմն ըսել է թէ իւրաքանչիւր աստղ կը գտնուի ժամական բոլորակի մը վրայ. և ամբողջ երկնային կամարը հասարակ արագութեամբ իրեն ժամական բոլորակներով կարգաւ կ'անցնի միջօրէական մակարդակին վրայէն:

4. Արդ աստեղ մը միջօրէականէն անցնիլը սահմանած ենք, կրնանք որ և իցէ ժամ գիտնալ այն աստեղ ժամական բոլորակաց որուն վրայ

գտնուիլը, և որովհետև ամեն աստղ իր անկիւնային հեռաւորութիւնը նոյն կը պահէ, ուրեմն ըսել է թէ կը գտնուի մէկ ժամական բոլորակին վրայ, այս բանս կոչի ուղիղ ելք այն աստղին: Իսկ աստեղ մը որչափ հեռու ըլլալը երկնային հասարակածէն կը շարժուի այն անկեամբ որ կը ձևանայ դիտողին աչքին մէջ երկնային հասարակածով և այն աստեղ ուղղութեամբ, և այս հեռաւորութիւնը կոչի խտտորումն աստեղ:

Այս բանս պարզ բացատրելու համար եւ թաղրենք որ ԲԲ' ախարհքիս առանցքն ըլլայ (Ձև 13) և ԲԳԳ' միջօրէական, որուն զուգահեռական ձգուած են 24 ժամական բոլորակները. ու ԳԳ' երկնային հասարակած: Եւ են թաղրենք որ Ա աստղ մը գտնուի ԲԿԻ' ժամական բոլորակին վրայ, այն աստեղ ԳԿ. աղեղը կոչի ուղիղ ելք Ա աստեղ: Եւ Ա աստեղ հեռաւորութիւնը ԳԳ' հասարակածէն, կամ ԿԱ աղեղը կոչի խտտորումն Ա աստեղ. այս կերպով կրնանք նաև աստեղ մ'երկնից երևան ունեցած զիրքը սահմանել:

Արդ ընդհանուր կրնանք ըսել որ այն ամեն աստեղք որ մի և նոյն ժամական բոլորակին վրան կը գտնուին՝ նոյն ուղիղ ելքն ունին. որով աստեղ մ' ուղիղ ելքը կը ցուցնեն թէ որ ժամական բոլորակին վրայ կը գտնուի: Կարճեալ այն ամեն աստեղք որ մի և նոյն երկնային զուգահեռականի վրայ կը գտնուին, նոյն խտտորումն ունին. որով խտտորումն գիտնալով կրնանք գտնել թէ որ զուգահեռականի վրայ կը գտնուի այն աստղը:



(Ձև 12)



(Ձև 13)

Որովհետև ըսինք թէ աստեղ մը խտտորումը կը շարժուի երկնային հասարակածէն, ուրեմն ըսել է թէ երբոր աստղ մը հեռաւորակն կիսազետին վրայ է, պէտք է որ իրեն խտտորումը

գտնելու համար 90° աստիճանէն հանել իրեն բեւեռէն ունեցած Հեռաւորութիւնը. իսկ թէ որ հարաւային կիսագնդին վրայ է, պէտք է բեւեռէն ունեցած Հեռաւորութիւնէն հանել 90° աստիճանը: Աւալինը կըսուի խոտորումն հիշախաչյին և երկրորդը խոտորումն հարաւային:

Գ Լ Ո Ւ Ի Ռ

Հաստատուն աստեղը

Ա

1. Հաստատուն աստեղը. — 2. Ինկլիկա կրեանք գանձագանել հաստատուն աստեղը մոլորակներէն. — 3. Քաժտանուն աստեղաց և երկնագունտ. — 4. Քարձորչիռն բեւեռի:

1. Երկնից երեսը գտնուող աստղերն ամբողջ օրական շարժման մէջ միշտ նոյն ժամուն մէջ երկնից նոյն կէտին վրայ կը գտնուին, ինչպէս որ վեր տեսանք, որով իրարու յարաբերական Հեռաւորութիւնը միշտ նոյն կը պահեն, ասոր համար այս աստղերը Հաստատուն աստղ բուռեցան: Ընդհակառակն կան քանի մը աստղեր որ ամեն օր իրենց դիրքը կը փոխեն յարաբերութեամբ ուրիշ աստեղաց, որով ըսել է թէ իրենց առանձին շարժումն ունին. այս պատճառաւ այս տեսակ աստեղքն կոչուեցան մոլորակային աստեղք կամ մոլորակք: Թեպէտ այս վերջիններն ալ աստղ կոչին, բայց իրենց յատուկ անունն է մոլորակ, որով պարզապէս աստղ ըսելով հաստատուն աստղերը կը հասկըցուին: Մոլորակային տեսակ աստղերէն են Գիսառորք, որոնք բոլորովին տարբեր շրջան ունին միւս մոլորակներէն:

Մոլորակային աստղերն ամբողջ միատեղ առանձին խումբ մը կը կազմեն, որ կոչի Սիւրասիին դրոշիռն, որուն մէջն է Արևը, Լուսինը, մոլորակները, գիսաւորները, և այլն. որուն վրայ յետոյ պիտի խօսինք:


2. Աստղերն և մոլորակները կրնանք զանազանել պարզ աչքով քանի մը նշաններով, առանց հարկադրելու երկարօրէն դիտել իրենց շարժումները: Կ'ախ աստեղաց յոյր հաստատուն չէ, այսինքն շարժման կը շարժի, մէյնը կը բացուի մէյնը կը գոցուի. բնդհակառակն մոլորակաց յոյր անշարժ ու միակեայ է: Աստեղաց լուսին այս յատկութիւնը չորոշորումն կոչի: Աստեղաց լուսն իրենցմէ է, իսկ մոլորակաց լուսն արեւն է:

Երկրորդ թէ որ դիտակով նայինք աստեղաց, միշտ լուսաւոր կէտ մը կ'երևան, և որչափ ալ դիտակին զօրաւոր ըլլայ, աստղերը նոյն պէս մէյնէկ լուսաւոր կէտեր կ'երևան և մանաւանդ աւելի մանր: Բայց երբոր մոլորակները դիտենք, մէկէն կը տեսնենք որ իրենց արամազիքը կը մեծնայ և կ'որ լուսաւոր գունտ մը դիմացին կ'ելլէ, և որչափ զօրաւոր ըլլայ դիտակն այնչափ աւելի մոլորակները մեծ կը տեսնենք: Այս տարբերութիւնը կը ծագի աստեղաց անհուն Հեռաւորութիւնէն. որովհետև ենթադրեւ լով՝ թէ դիտակ մ'ունինք որ 1000 անգամ կը

մեծընէ Հեռաւոր առարկայ մը, այս դիտակով նայելու ժամանակ պիտի ենթադրենք որ 1000 անգամ նուազ Հեռու ըլլայ աստղ մը, բայց նոյն ժամ աւելի մտեցնենք հարկաւ աւելի մեծ կը տեսնենք: Վերջ բնիք թէ աստղերը միշտ երկնից նոյն կէտին վրայ Հաստատուն կեցած են, բայց ճիշդ խօսելով՝ աստղերը տիեզերաց մէջ գուրկ չեն շարժումներ, վասն զի տիեզերաց մէջ անկարգ բան կ'այ. սակայն անոնց շարժումները իրենց անհուն Հեռաւորութեան համար մեզի անզգալի է, բայց միշտ իրենք ալ կը շարժին:

3. Աստղերը մեզի անշարժ երևնալուն համար, կրնանք զիրենք կարգ կարգ բաժնել, և թղթոյ կամ տախտակի վրայ գծագրել: Ուստի այն գունտերն որոնց վրայ աստղերը գծադրուած են, իւրաքանչիւրն իրեն երկնից երեսն ունեցած դիրքով՝ այն գունտերը կոչին երկնագունտ:

Ինթագրենք որ ունինք փայտէ գունտ մը (Չկ. 14), անոր վրայ գծենք այլևայլ գուգահե.



(Չկ. 14)

առական շրջանակներ 24 հատ, իւրաքմէ 16 աստիճան Հեռու: Ասոնց վրան իւրաքանչիւր աստղին տեղը կը նշանակենք, աստղին ուղիղ ելից և խոտորման համեմատ: Հիշադրելու Հարաւային շրջանէն է երկնագունտ մը վրան 1036 աստղ նշանակելով, իւրաքանչիւր աստեղ անկիւնային Հեռաւորութեան համեմատ:

Այս տեսակ գունտ մ'է նաև մեր դրած ձևը, որուն ՔՔ՝ առանցքին երկու կողմը մտած են ՄԱ հաստ պղնձէ զագաթնակայեաց շրջանակին մէջ որ կոչի միջօրեական և կրնայ գունտն ազատարար դառնալ առանցքին վրայ: Այս ՄԱ միջօրեականին ուղղակայեաց կայ ուրիշ

հաստ չընանակ մը ՀՀ՝ որ կոչի հորիզոն: Իւ այնպէս դրուած է միջօրէականն որ կրնանք իւրեն և որ իցէ կէտը մտնեցնել հորիզոնին կամ հեռադրելն, միշտ ուղղահայեաց մնալով հորիզոնին: Ամբողջ գործիքը կեցած է փայտէ ոտքի մը վրայ:

Արդ այսպէս գունար շինելէն ետև, կ'ուզենք գործինակ, ամբողջ օրական շարժմունքը ներկայացրնել որ և իցէ տեղւոյ մը: Պէտք է գունար այնպէս դնել որ ի թի՛ առանաւոր ճիշդ տեղւոյն բնեալայ շտուծիւնն ունենայ, և միջօրէականն ալ տեղւոյն միջօրէականին հետ յօլափէ: Այսպէս դնելէն ետև, ՅԱ աստղային ժամուոց մէջ գունանո ինքիք վրայ չընելով, դիտող մ'որ գունախին կեդրոնը կեցած ըլլայ՝ կը տեսնայ ամբողջ աստղերն որ կ'անցնին միջօրէականին վրայէն:

4. Բայց այս գործողութիւնն ընելէն առաջ, պէտք է գիտնալ թէ ինչ է բարձրութիւն բևեռի: Որ և իցէ տեղւոյ մը բարձրութիւն բևեռի ըսելով կ'իմանանք բևեռին հեռաւորութիւնը հորիզոն մակարակէն: Արդ ենթադրենք որ այս տեղն ըլլայ հասարակածին տակ. այն աստեղն իր բևեռին բարձրութիւնն է 0°, որ է ըսել բևեռները ճիշդ հորիզոնին վրայ կը գտնուին, վասն զի հասարակածն 90° հեռու է երկրի բևեռներէն: Ուրեմն ըսել է թէ որչափ որ դէպ'ի բևեռ մը երթանք՝ այնչափ ալ այն բևեռին բարձրութիւնը կը շատնայ: Չոր օրինակ ըսենք թէ կը գտնուինք հիւսիսային կիսագնդին քաղաքի մը մէջ, ինչպէս Վիլյան, և կ'ուզենք իմանալ թէ ինչ է իրեն բևեռին բարձրութիւնը. նախ կը նայինք թէ Վիլյան որչափ հեռու է հասարակածէն, այնչափ ալ իրեն բևեռը բարձր է, որով գործիքին վրայ հիւսիսային բևեռն այնչափ աստիճան կը բարձրացրնենք հորիզոնէն վեր. և ասով յարմարուցած կ'ըլլանք գունար տեղւոյն բևեռին բարձրութեան հետ:

Բ

- 1. Համաստեղորդիւնը. — 2. Անոնց քիւր. —
- 3. Այնչափ մեծորին աստեղաց. — 4. Անուանակցութիւնը աստեղաց. — 5. Պարզ ալքով տեսնուած աստեղաց քիւր. — 6. Դիտակցիւն աստեղից:

1. Հին աստեղէն սկսեալ սովորութիւն եղած է աստղաբաշխից որ ամբողջ աստղերը խումբ խումբ առնելով, անոնց մէյմէկ անուն դրած են, մարդկանց, կենդանեաց և անյունչ իրաց անունները:

Այս անուններն ամենևին յարաբերութիւն չունին ոչ անոնց ձևին հետ և ոչ անոնց թուոց. և այս խումբ խումբ աստղերը կոչին խումբաւոր դարիւնը: Համաստեղութեանց անուններէն յաւասն ին աստեղէն մնացած է, բայց չենք գիտեր թէ երբ սկսած են այս անունները դնել, միայն այն յայտնի է որ շատ հին են. վասն զի Հռոմբուս կը յիշէ, Բոյլը, Հիպը: Հայկ, Արլ կամ Սայլ Համաստեղութիւնը: Ինչպէս նաև կ'ըսէ Յորայ գրքին մէջ. «Ինչպսմտաւ իցնս կարգի բազմ»

աստեղաց և քո բացեալ իցէ զպատրուակ Հայկին». և այն: Գիտենք նաև Երգիպոսացոց պատմութենէ Բեբրնիկեան Գէսին դէպքը: Ասոնց մէջ գատ նաև զիւցազանց և երևալի անձանց անունները, ինչպէս Հերակլէս, Անդրոմէդ, Անտինուս և այլն կը ցուցնեն ժամանակին հնութիւնը: Վիպլ բանիւ այս անունները հին աստեղէն 'ի վեր գործածուած են, և այս անուանց մէկն ըսելով՝ կ'իմանանք երկնից մէջ մէկ կողմը գտնուած աստեղաց խումբ մը:

2. Պտղովնոս եզրկառացի աստղաբաշխը (1) 48 համաստեղութիւնք համարած էր. 21 հատ հիւսիսային կողմը, 18 հատ հարաւային կողմը, և 12 հատ մէջլեւոր մօտ հասարակածին. և այս վերջին 12 հատը կը ձևաչընեն կամար մ'որուն վրայէն Սըււր կարծես թէ իրեն տարեկան շրջանը կ'ընէ, այս 12 համաստեղութիւնք կոչուեցան Չաղիակը: Կամ Կենդանակերպը: Ամբողջ 48 համաստեղութեանց վրայ 1029 աստղ կը համարէր. 361 հատ հիւսիսային կիսագնդին համաստեղութեանց վրայ, 318 հարաւային համաստեղութեանց վրայ, 310 զողիակոսին վրայ:

Աստիճակ Չաղիակոսի համաստեղութեանց 12 անունները որ տարրուան 12 ամիսներուն կը համասպասարկանեն, որոնց իւրաքանչիւրին մէջ Սըււր մէկ ամիս կ'անցընէ:

Իրենց նշանները կենդանակարևարին վրայ

1. Խոյ	Υ
2. Յուլ	♄
3. Երկաւոր	♁
4. Խեցզետին	♆
5. Արեւծ	♌
6. Կոյս	♋
7. Կլիո	♍
8. Կարիճ	♎
9. Աղեղնաւոր	♏
10. Աճծեղիւր	♐
11. Զրհոս	♑
12. Զուկն	♒

Հիւսիսային կողմի Պտղովնոսի 21 հատ համաստեղութեանց անուններն ասոնք են.

- 1. Փոքր Արլ
- 2. Մեծ Արլ կամ Սայլ
- 3. Վիլյայ
- 4. Կնքէա

(1) Պտղովնոս յոյն կամ եզրկառացի աստղաբաշխը Գրիտասոսի երկրորդ գարուն ծաղկեցաւ: Երգիպոս աստեղ Աղեղնաբաց կեցաւ, և ինչ որ իրեն առաջ գրուած կամ կարծիք գատ հին փիլիսոփայի աստղաբաշխութեան վերաբերեալ գտնած ծաղկեց և աստեղաց յետոց: Ընդհակառակ է իրեն տեղային գրութիւնը, որ իր անուամբ կոչի Պտղովնոս գրութիւն, որուն վրայ յետոյ պիտի խօսինք: Ժամանակակից անմիջ զինքը մեծ աստղաբաշխ հաշուած են, սակայն անեւ տիաստետր անձն է քան Հանճարուոր:

- 8. Եղող կամ Անդէորդ
- 6. Պսակ հիւրասպին
- 7. Վահագն կամ Հերակլէս
- 8. Քնար
- 9. Կարապ
- 10. Կասրովէ
- 11. Պերսէոս
- 12. Կառավար
- 13. Օձակալ
- 14. Օձ
- 15. Կես
- 16. Արծիւ
- 17. Դրփին
- 18. Փոքր ձի
- 19. Պեգասոս
- 20. Անդրովէդ
- 21. Հիւսիսային եռանկին

Հարաւային 15 համաստեղութիւնքն ասոնք են.

- 1. Կէտ
- 2. Հայկ կամ Որիոն
- 3. Երիզանոս դեռ
- 4. Կապատակ
- 5. Մեծ Շուն
- 6. Փոքր Շուն
- 7. Կա Արգիսացոց
- 8. Էգ Հիդրա
- 9. Բնպանակ
- 10. Ագռաւ
- 11. Սեղան
- 12. Կենդաւորս
- 13. Գայլ
- 14. Զուկն Հարաւային
- 15. Պսակ Հարաւային

Հնոց այս համաստեղութիւններէն դուրս կա մին ուրիշ աստեղը զորոնք Պտղոմէոս դուրս թողուցեր էր, անոր համար ալ կոչէին Սննէք: Սակայն արդէ աստղաբանք անոնց ալ անուններ դրին և Կոր Ալիսարհը գտնուելէն ետքն ուրիշ համաստեղութիւնք ալ ձևացուցին, որով ամբողջ համաստեղութեանց թիւն եղաւ 117 հատ (2):

3. Որովհետև երկնից երեան երևցած ամեն աստեղք նոյն պայծառութիւնը չունին՝ անոր համար աստղերը քանի մը կարգ բաժնուած են իրենց լուսոյն պայծառութեան կարգաւ: Այս պէս ամենէն փայլուն աստղերն առաջին կարգի աստղ բաժնեցան, և սպա երկրորդ կարգի աստղ, որոնք առաջնոց պայծառութիւնը չունին, սպա երրորդ, չորրորդ, հինգերորդ մինչև վեցերորդ կարգի, որոնք պարզ աչքով ալ կր տեսնուին. իսկ եօթներորդ, ութերորդ և այլն կարգիները դիտակով կր տեսնուին: Բայց այս կարգաւ աստղերը բաժնելու ատեն՝ ըսել չէ՛ թէ անոնց մեծութեան տարբերութիւնն ալ իրարմէ նոյն կարգաւ կը յամրողեն. վասն զի կրնայ ըլ-

լալ որ աստղ մը վեցերորդ կարգի մէջ գտնուի և առաջին կարգի աստղներէն մեծ ըլլայ, բայց անոնցմէ հետոս ըլլալով իրեն լուրջ քիչ կր հասնի մեզի, որով պարի կը տեսնուիք. ուրեմն ըսել է՛ թէ աստեղաց կարգի բառ կամս զրուած է, կա պակցութիւն չունի անոնց իրական մեծութեան հետ: Դեննք հոս պատկեր մը զանազան կարգի աստեղաց մինչև վեցերորդ կարգը (Չև 15):



(Չև 15)

4. Մի և նոյն համաստեղութեան մէջ ամեն կարգի աստղ կրնայ գտնուիլ: Հին աստեղը քանի մ' ամենապայծառ աստեղաց մասնաւոր անուններ դրած էին, ինչպէս Սիրիոս՝ Մեծ Շուն համաստեղութեան ամենէն պայծառաղոյնը. Ալտիպարան կամ օ (աջ՝) Բուլին, Հասկ կուսին, Ռիզել Հայկայ ձախ ոտքին վրայ, Կրանովպոս՝ հարաւային կիսագնդին վրայ ամենապայծառ աստղը Արգոնաւ համաստեղութեան վրայ. Պրոկիոն՝ Փոքր Շան ամենապայծառ աստղը. Սիրս Հիդրաց, Ալդաբիր, Յորնախոս, Պոդիսուկին, Վէկա, Արտորոս՝ Եղողին վրայ. Երիզանոսի վրայ՝ Աքսաւար, Այծ՝ Կառավարին վրայ, Սեղարեւ կամ օ Կարծին. Պեդիքէօզ կամ օ Հայկայ, և այլն: Բայց հիմա աստղաբանք աստեղաց փոխանակ մասնաւոր անուններ տալու, անոնց վրայ յունական այբուբենի գիրերը կը դնեն. օ կը նշանակէ առաջին կարգի աստղ, ֆ (ֆէր) երկրորդ կարգի, և այլպէս կարգաւ: Ինչպէս զոր օրի՛նակ, օ Հայկայ, ֆ Կենդաւորսի, օ Արծուին, օ Կուսին, ֆ Հայկայ, և այլն. որոնք կը ցուցնեն այն համաստեղութեանց մէջ գտնուած պայծառ աստղերը:

Կրկնից երեսը 20 հատ առաջին կարգի աստղ կը գտնուին, 68 երկրորդ կարգի, 192 երրորդ կարգի, 428 չորրորդ կարգի, 1100 հինգերորդ կարգի, 2878 վեցերորդ կարգի. որով հիւսիսային և Հարաւային կիսագնդին վրայ 4684 հատ աստղ կը գտնուի մինչև վեցերորդ կարգ: Դեննք հոս առաջին կարգի 20 աստղերը:

- 1. Սիրիոս
- 2. Կանովպոս
- 3. Ալֆա Կենդաւորսի
- 4. Արտորոս
- 5. Ռիզել
- 6. Այծ
- 7. Վէկա
- 8. Պրոկիոն
- 9. Պեդիքէօզ
- 10. Սքանաւր
- 11. Ալտիպարան
- 12. Վիդա Կենդաւորսի
- 13. Ալֆա Խային
- 14. Անդարէս
- 15. Ալդաբիր

(1) Մենք հոս չուզեցինք ամբողջ համաստեղութեանց անունները շարել, ուրիշ կեանք որ և իջե երեմագունս զորմալ մէ վրայ գտնել գտնուիք:

- 16. Հասկ կուսին
- 17. Յովմալուս
- 18. Վիգա յուշին
- 19. Պողոսեկին
- 20. Հոնգուղոս

5. Թէպէտ և աստեղաց թիւն անբաւ է, սաւ կայն պէտք է երկու մաս բաժնել. մէյմ՝ անոնք որ պարզ աչքով կը տեսնուին, երկրորդ՝ որ զիւ տակաց ձեռքով կը տեսնենք: Պարզ աչքով տեսնուած աստեղաց թիւն համրած է Արկեանտէ աստղաբաշխը Պեռլինու հորիզոնին վրայ և զըտած է 3256 աստղ, բայց աստղաբաշխն այսչափ աստղ տեսած է երկնից կամարին ութը տասներորդաց մէջ. որով համեմատութեամբ մնացած է երկու մասին մէջ կրնանք 844 աստղ ենթադրել. ասով ամբողջ աստեղաց թիւը կ'ըլլայ 4100 աստղ պարզ աչքով տեսանելի:

Բայց աստեղաց թիւը կրնայ աճիլ ու նուազիլ ըստ այնմ որ դիտողին աչքը սուր է կամ կարճատես, սակայն որչափ ալ սրատես ըլլայ դիտողը 6000 աստղէն աւելի չկրնար համրել, որով այս թիւն ընդհանուր եղած է պարզ աչքով տեսանելի աստեղաց:

6. Գիտակով տեսնուած աստեղաց գաղով, երբոր այս գործիքով դիտենք, աստեղաց թիւը անհամեմատ կ'աճի, և է անթիւ. որչափ որ գործիքը զօրաւոր ըլլայ այնչափ ալ կ'աճի աստեղաց բազմութիւնը: Ազրով (1) Հէրշելի դիտաւ

(1) Ուսու երեկէ պատըրաշի, 35. 1793 և վաթ. 1864,

կով, որ 6, 5 մէդր երկայնութեամբ էր և 38 Հաւրիւրորդմէդը տրամագծով, 20,400,000 աստղ տեսաւ:

Ուրիշ աստղաբաշխը 80 միլիոն տեսած են, առաջին և մինչև չորրորդ կարգի աստղերը:

Բայց ամենէն աւելի զարմանալին է Երկուրեակ համաստեղութեան մէկ անկեան մէջ միայն տեսնուած աստեղաց թիւը: Որովհետև պարզ աչքով եօթը Հաս աստղ կ'երևայ (Չև 16), իսկ թէ որ դիտակով նայինք 3205 աստղ դիտանին կ'ըլլեն, երրորդ կարգի աստղէն սկսեալ մինչև երեքտասներորդ կարգ: Ասկէ կրնանք գաղափար մը չինել որ երկնից երեսը Աստուծոյ տեղծած աստեղաց թիւը մեր թիւերէն վեր է, թէ որ միայն մէկ կէտի վրայ եօթը աստղը երեք Հասը աստղէն աւելի կը բազմանան, ինչ պիտի ըլլայ ամբողջ տիեզերաց մէջ աստեղաց թիւը: Անոր համար որչափ որ նոր և զօրաւոր գործիք հնարուին, այնչափ ալ դիտանցին բնութեան և տիեզերաց հրաշալիքը կը պայծառանան:



(Չև 16)

բաց՝ բրտ թազմութի գիտողութիւններէ՝ իրն զըլտուոր որդիւնքն է Հէրշելի դիտողութիւնը Հաստառան աստեղաց ու բազմաստեղաց վրայ շարժանակէլ:

Հ. Մ. Ս.

Կը շարունակուի

## ԵՆԵԿՏՐԱԿԱՆ ԼԱՄԲԱՐ ԷՏԻՍՈՆԻ

Արդէն մեր ընթերցողաց ծանօթ է թովմաս Խոխոսնի անունն, որուն ձայնագիր (phonographe) գործուոյն վրայ խօսած եմք Բազմալէպ Հանդիսարանիս էջերուն մէջ<sup>1</sup>: Սակայն այս անձը կ'երևայ որ բեղնաւոր միտք մ'ունի, որ օր օրուան վրայ նորանոր գիւտեր առաջ բերելու կ'աշխատի: Արդեօք և Խոխոսն այն քանի մ'անձանց նման մարդկութեան զարմանաց և յարգութեան արժանի պիտի ըլլայ՝ որոնք քիչ անգամ երևցած են ժողովրդոց պատմութեան շրջանին մէջ. ժամանակն և գտած գիւտերուն արդիւնքը պիտի ցուցնեն: Վասն զի ոմանց համար Խոխոսնի ամեն գտած գիւտը մեծահանձար իրեր են.

և ոմանց համար ալ իր ամեն գիւտերն չեն արժանի այն աստիճանի զարմանաց: Որովհետև բաւական է որ մարդու մ'անունը հռչակուած ըլլայ, անոր ամեն պզտի և տղայական գիւտն կամ խօսքն՝ մեծ հանձարոյ և խորին մտածման հետեանք կը կարծուի. և մանաւանդ որ Ամերիկոյ լրագիրք ոչինչ դիպուած մ'այնչափ կը մեծցընեն, որ կարծես թէ բոլորովին առասպել է ըսածին: Սակայն այս ալ պէտք է խոստովանել, որ Խոխոսնի ձայնագիրը միշտ իրեն հանձարոյն գովեստ պիտի խօսի:

Այս վերջի ատեններս զարձեալ ուրիշ գիւտ մը կը հռչակուի քաղաքականացեալ աշխարհին մէջ ելեկարսկան շարժար Խոխոսնի անուամբ: Ա-

1 Բազմալէպ Հանդիսարան Հտ. 12. Երես 89.